

կան մեծ դժգոհություններ — դեմոկրատիզմի հաւատարմութիւնը տողորուած — ընդհառաւ կ'երթան այդ ձգտումին:

Քաղաքական գրականութեան մէջ ժամանակէ մը ի վեր կը ծեծուի Համապալքանեան Դաշնակցութեան գաղափարը: Իսկ ամիս մը առաջ Ֆրանսիոյ մեծագոյն պետական գործիչներէն եւ դեմոկրատ դէմքերէն մէկը, Արիստիտ Բրիան, յանուն Ֆրանսայի, դրաւ միջազգային դիւանագիտական կանաչ սեղանին վրայ՝ Եւրոպայի Միացեալ Նահանգներու կազմակերպութեան ծանրակշիռ խնդիրը, որ բոլոր պետութիւնները յանձն առին ուսումնասիրելու:

Շատերուն ծիծաղը շարժեց Պրիանի նախաձեռնութիւնը, շատերը կը համարեն այն՝ արտառուց գաղափար մը, ցնորք: Բայց իւրաքանչիւր մեծ գաղափար «ցնորք» մըն է եղեր իր խանձարուրին մէջ:

Պիտի կազմակերպուի վաղ թէ ուշ, անտարակոյս եւ մեր զառամ Արեւելքը համադաշնակցական կարգերով:

Ընկերվարական եւ դեմոկրատ մարդկութիւնը անբաղձալի կը համարէ Ռուսաստանի մասնատումը, «փոշիացումը»:

Աւելորդ է ըսել, որ մեզի համար եւս անբաղձալի է այն:

Ուրբախացի, լեհ, վրացի ու թաթար հայրենասէրները կրնան այդ փոշիացումը համապատասխան գտնել իրենց ազգային շահերուն (բան մը, որ տարակուսելի է — եւ արդէն Ծերեթելի, վրաց համբաւաւոր գործիչը, որ Վրաստանի պաշտօնական ներկայացուցիչն է Ընկերվարական Ինտերնացիոնալի մէջ, համաձայն է իր շարք մը անջատողական, ռուսատեաց եւ թրքամոլ ընկերներուն հետ) — մեզ, հայերու համար բաղձալի է միայն հզօր ու դեմոկրատ Ռուսաստանի գոյութիւնը:

Վասնզի նա՛ միայն կարող է ջլատել համաթուրականութեան այն ահռելի պատուհասը, որ կը ձգտի հեղեղել Կովկաս, Թուրքեստան, պարսկական Աղբալէյճան եւ սպառնազին կուլայ մեր գլխուն, ձգտելով իսպառ փոշիացնել Հայկեան ցեղը:

Վասնզի նա միայն կը կամենայ եւ կը կարենայ (խօսքս գալոց Ռուսաստանի մասին է) ճզմել թուրանական այդ ամենհի հիգրայի դըլուխը, ի փառս Արեւելքի խաղաղութեան ու յառաջագիւծութեան:

Վասնզի նա՛ միայն խորապէս շահագործողութեամբ է այդ հիգրայի գոյութեամբ, ունենալով իր ծոցին մէջ, բուն իսկ Ռուսաստանում, թրքութեան հոծ զանգուածներ:

Համաշխարհային կենդրոնացումի այդ անդիմադրելի պրոցէսին մէջ Անդրկովկասը իր երեք դաշնակից հանրապետութիւններով պիտի կրնայ՝ արդեօք ապրիլ ու յառաջգիւծել մեկուսի, կղզիացած, թէ՛ պիտի յարի ուրիշ լայնարձակ ու զօրաւոր դաշնակցութեան մը: Այդպիսին կարող է լինել կամ Համառուսական Դաշնակցութիւնը, կամ մի այլ Ֆեդէրատիւ — արեւելեանը, ասիականը, որու մէջ կրնան մտնել Թուրքիա, Պարսկաստան, Արաբիա, Միջագետք, Աֆղանիստան եւ այլ իսլամ պետութիւններ...

Ժողովուրդներու ազատ կամքն է, որ պիտի որոշէ այդ խնդիրն եւս: Եւ հոս դարձեալ կը թաղնուի ահեղ վտանգ մը մեզի համար, աշխարհագրական մեր անիծապարտ միջավայրում: Վասնզի անդրկովկասեան երեք գըլխաւոր ազգութիւնները, Մակիդոնալդի արտաշայտութեամբ, չունին ընդհանուր թշնամի եւ վճռական վայրկեաններուն — ինչպէս 1918-ի սեւ օրերուն — կը մատնեն տարբեր, հակամարտ օրինատասիրոն մը...:

Դէպի ո՞ր կ'երթայ Անդրկովկասը:

Վերջացուցինք: Բայց այսպիսի թուացիկ տեսութիւններով չէ, որ կը սպառուին նման կինճուտ ու տանջալից խնդիրները: Հարկ է անոնց վերադառնալ պարբերաբար: Բաւական է ամէն առթիւ բացականչել «կեցցէ՛ անկախ ու միացեալ Հայաստանը» — հարկ է աչք ածել նաեւ դալոց հաւանական վտանգներուն վրայ, որոնց հանդէպ մեր սահմուկող միտքը անճարօրէն պատէ պատ կը դարնուի ու ելքեր կը փնտռէ:

Վտանգ թրքական ներխուժումներէն, վրատանդ ռուսական յեղաշրջումներէն, վտանգ